

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

### ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

14. 03. 2016թ.

ք.Վանաձոր

#### Մասնակցում էին

- Ա. Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Ա. Ասատրյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդոյանը - մարզպետի տեղակալ
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Դ. Մանուչարյանը, Վ. Գևորգյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Հ. Մկրտչյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը, Ս. Ղուբաթյանը, Ա. Աղլոյանը, Ն. Սարգսյանը, Ա. Գրիգորյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Ա. Չատինյանը - ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության ներկայացուցիչ

#### Օր ա կ ա ր գ ու մ`

1. Անցյալ ժամանակաշրջանում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

#### Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. Մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Վ. Ասատրյանին, Տ. Բաղդոյանին, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին`

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման եռամսյակային պլանների կատարման ուղղությամբ:

/Ժամկետ` մինչև 31.03.16թ./

2. Մարզպետի տեղակալ Ա. Դարբինյանին`

ա) Անհրաժեշտ հսկողություն իրականացնել կոշտ կենցաղային թափոնների վերամշակման գործընթացի իրականացման նկատմամբ:

բ) Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզի համայնքների կողմից ջրամատակարարման համակարգի գույքագրման աշխատանքների իրականացման նկատմամբ:

3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին`

Անհրաժեշտ հսկողություն սահմանել սոցիալական աջակցության խորհուրդների աշխատանքների նկատմամբ` դրանք առավել թափանցիկ և հրապարակային դարձնելու նպատակով և պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն` կատարված աշխատանքների վերաբերյալ:

4. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին`

15 օրյա ժամկետում ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն Լոռու մարզում կաշվի արտադրության և վերամշակման հեռանկարների վերաբերյալ:

5. Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին`

Ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն Վանաձորի թիվ 7 դպրոցի հողհատկացման և քաղաքաշինական հիմքերի ու փաստաթղթերի տրամադրման վերաբերյալ:

6. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համայնքային հողերի բուսածածկի, անտառների հարակից տարածքների պահպանման և հրդեհների բացառման նպատակով՝ անհրաժեշտ բացատրական աշխատանքներ տանել համայնքների բնակչության հետ:

/Ժամկետ՝ 2 օր /

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ա.Մակարյան  
Հեռ. 0322/4- 32- 99/